


Հ Ա Ս Յ Ի

Rédaction du Journal arménien

ARCHALOUYON

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմ 30

ԱՐՏԱՍՏԱՆ

Տարեկան գրանց 10

Բաժանորդի օգուտը չի հաշվարկվում և փոխարինվում է գրանցման գումարով:

Ձի հրատարակումը անապահանգ է
ևս չի՛նք տրուի:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն . Գ Ր Ա Կ Ա Ն . Ե Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ի Ք

ՕՐԳԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԱՆՊԱՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Թի՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքին խնդրոց համար
պիտի է ղրկել ներքին գործերի նախարարի
ընդհանուր Մատակարարին, որ է՛

ԳՆՈՐԴ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Յոգու տողերը ուղղակի զուտախառն
սու են իրենց գրանցումը

ZUSE 20 ՓԱՄԱ ՈՂԸ

ՊՐԵՍԱԿԱՆՈՅՄԸ

ՀԱՄԱՐԱՆՈՒՄԻՆԸ և ԱՋԳԱՅԻՆ ԱՆՊԱՐ
ԿԱՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԾ

Չանագան մեկնում է ինչնեքու ան-
դի չ'արուելու համար երկու խոս-
քով բացատրեմք թե՛ ի՞նչ է սեր
համաձայնությունը և Աղբյուրն ան-
կախ Միությունն և հետ:

Սոյն ընկերությունը օրէնքի և
բարոյական սկզբունքներու վրայ հիմ-
նուած նորահաստատ ընկերություն
մը չէ: Իր կազմութեան թուական
նը բաւական հին է, և լուծեան
մէջ գործելը բնական ընտրած է ի
րեն: Ահա ի՞նչ է ընդհանուր, Տեղորի
գործողությունները չ'հասարակ, այլ
կը խրատե՛նք ի՞նչ է ժամանակը հասած
կը նկատէ: Երկրին տիրող օրէնքը
կը սիրէ և կը յարգէ՛նք ի՞նչ է անար-
դարությունն չի գործուի: Արշալոյս
ո՛ր է կապ չունի անոր հետ և իր
պաշտօնականներուն խի չ'ներեր մաս-
նակցիլ ո՛ր է է խորհրդութեան:

Արշալոյս միմիայն անոնց պաշ-
տօնական հրատարակությունները պի-
տի ընէ վճարումի փոխարէն, և ոչ
ուրիշ բան:

Աղբյուրն Անկախ Միությունը՝
արդէն հրատարակուած ո՛ր է ընկե-
րությունն հետ առնու թիւն և կապ
չունի, բայց իր սեփական օրգանը
պիտի ունենայ մոտ առնենք, և մին-
չև այդ առնեն է որ Արշալոյս յան-
ճին առած է անոնց հրատարակու-
թիւնները ընել:

ԽՈՐԻ:

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԵՒ
Կ. ՊՈԼՍՈՅ
ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տ. Յարութիւն Պատրիարք Փե-
ար. 10 թուով գրած է Էջմիածնի
Սրբազանին. զոր Մանգրուէն կ'ար-
տագրենք:

Չեր Բ. Սրբազանութեան 9 Յուն-
ուար և համար 160 ստացանք, ո-
րով Գեր. Տ. Յակոբ Աշոտեպոս. Փա-
փազեան Ազն. Կեօրք Էֆ. Ֆիքրի և
Հայկազն Էֆ. Պէկեան ի Ս. Աթոռ
յլեկիք կը ծանուցանէինք: Յիշ-
եալ սիրելիները կրնք օր Յոպպէ ըս-
պասել յետոյ Յունվար 25ին երե-

կոյնան գէ՛մ երոստղէ՛մ հասան և
ընդունուեցան պատշաճ հանդիսա-
ւորութեամբ: Երբ օրը նամակ մը
ստացանք մեր Պատրիարքական իշխա-
նութեան և միաբանական կանոնադրի
գէ՛մ ըմբոստացող Սերովբէ վրդ. է,
յորում կը յայտնէր թե՛ պատ. քն-
նիչք ի Յոպպէ հարկ եղած քննու-
թիւնները աւարտած են: Մենք
այնպէս կը կարծէինք թե՛ Յոպպէ
ապոստանող վրդ. պ. որ քանիցս
անարդեցին մեր հայրական հրաւեր-
ները, մերժեցին տեղուս վսեմ-
կառավարին անձամբ զիրենք երու-
ստղէ՛մ առաջնորդելու առաջարկը,
և մօրուքը ածիլել սպառնացան
զիրենք ի Ս. Աթոռ. հրաւիրելու
գնացող մեր փոխանորդին, վեր-
ջապէս պիտի ընկերանան պատ. քն-
նիչներու և վրդ. մը պիտի գտնեն
խաղաղ Միաբանութեան սիրտը վի-
րաւորող անհաճոյ և փաստաբեր գոր-
ծերը, սակայն այս անգամ ալ յուսա-
խաբ մնայինք Ս. Աթոռոյ Տնօր. Ժո-
ղովոյ հետ աճող միաբանութիւնը
անցնելոյն տխուր յիշատակներէն խը-
րատեալ պատ. քննիչներէն պահան-
ջեց Պատ. Երեսի. Ժողովոյ կողմա-
նէ իրենց յանձնուած հրահանգին
Միաբ. Բնիչ. Ժողովոյ սեղանին վը-
րայ գրուելը, և հրապարակային ա-
նաչառ քննութիւն մը կատարուիլը:
Պատ. քննիչք նախապէս խոստացան
կատարել Միաբանութեան այդ ան-
կեղծ ու արդար խնդիրը: Սակայն
յետոյ մերժեցին: Միաբանութիւնը
պնդեց իր այս արդար պահանջման
վրայ, աւարկելով թե՛ նախորդ
քննիչները հրահանգը կերպիւ իւր
ձածուկ պահելով՝ աւելի անպատե-
հա թեանց և անտեղութեանց պատ-
ճառ տուին, որով վանքը հոսու
այս վիճակին: Միաբանութիւնը
պահանջեց գործը գտնուող բոլոր
միաբանները հաւաքուելով հրապա-
րակային դրաւոր անաչառ քննու-
թիւն մը կատարել և ցոյց տալ աշ-
խարհի և ազգի թե՛ որո՞նք են այս
երկպառակ վիճակը առաջ բերողնե-
րը: և ընդմիջա քակել Սաղմոսական
խնդիրը, որ այնքան զբաղեցուց
կեզրոնդ և մեծ փաստ պատճառեց
Ս. Աթոռոյ Սակայն պատ. քննիչք
չգիտեմ ի՞նչ նպատակաւ խոստափո-
ղական զիրք մը բռնեցին հանդէպ
այս օրինաւոր պահանջմանց, և հը-
րահանգը իրրե գաղտնիք իրենց
վերապահելով որ և իցէ օրինական

ձեռնարկութիւն մը չըրին, և կար-
ծեաց փոխանակութեան մը համար
մինչև իսկ Միաբ. Բնիչ. Ժողով մը
անգամ գումարել չտուին և չուղե-
ցին: Փետր. 6ի առաւօտը, մինչ
Միաբանութիւնը ըստ տարեկան սո-
վորութեան Ատոռոց վանք դացած
Ս. պատարագ կը մատուցանէր, ի-
մացանք թե՛ պատ. քննիչք ոչ ոքի
լուր տալու և ո՛չ իսկ մեզ, իրենց
գոյքերովը Յոպպէ մեկնած են:
Արդէն Չեր կրթազան եղբայրութեան
հաղորդեցինք հեռագրաւ. ներկա-
յիւս ալ կը յայտնենք թե՛ միաբա-
նութիւնը իր գարաւօր սովորու-
թեան և սահմանադրական օրինոց
համաձայն ունի իր Ժողովները և
կ'աշխատի յօգուտ Ս. Աթոռոյ և ի
պայծառութիւն Ս. Տեղեաց: Յոպպէ
ապոստանող վրդ. պ. յամենայնի
խոստափելով կը շփոթեցնեն կը ըզ-
բաղեցնեն կեզրոնդ, քննութիւն և
հաշիւ տալու համար ցա՛րգ քննիչ-
ներու կը սպասեն: Բնիչները ե-
կան, սակայն իրենք դարձեալ հոն
մնացին. մանաւանդ Սերովբէ վրդ.
յենով սրբազնութեանդ հեռագրին
կը յամառի Յոպպէի տեսութեան
մէջ մնալ հաշիւ չը զրկել և միայն-
գամայն արգելք կը դառնայ Պանք
Օթոմանի Ս. Աթոռոյ կալուածոց
վարձքերը հաւաքելու և կը խորհ
Սրբազնութեանդ սրպէս թե՛ կալ-
ուածները գրաւի տուած ենք, իսկ
Մատթէոս Վ. այսպիսի մեծ ու նը-
ւիրական հաստատութեան մը գոցան
և պաշտօնական թղթերը քակած և
ապոստանած է Յոպպէ: Ս. Աթոռ-
ոյ տարեկանութեան մէջ այս օրի-
նակ ոսնձգութիւններ և ըմբոստու-
թիւններ տեսուած չեն:

Հրապարակային անաչառ քնն-
ութիւն մը պիտի մարքէր և վերջ
մը տար այս ցաւալի գէպքերուն,
սակայն նոր քննիչները բան մը չը-
րին և Յոպպէ իջան, ու մենք ինչ-
պէս ըսինք չը կարողացանք հասկնալ
թե՛ ինչո՞ւ:

Ներկայս մատուցանելով Չեր Բ.
Սրբազնութեանդ և Պատ. Երեսի.
Ժողովոյ խորին ուշադրութեան:

Ողջունելու եղբայրական սիրոյ
Մնամք աղօթակից
Պատրիարք Ս. Երեսայեմի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԲԵՊՈՍԿ

ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐԲԻ ԽՆԴԻՐԸ
ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆԻ ՄԷԿ ԵՐԱԲԵՐԱԿԱՆԸ

Գաւառ. Աղբ. վարչութեանց
կողմէ հեռագրեալ ուղղեալ զանազան
գրերով կը ծանուցուի որ տեղա-
կան իշխանութեանց կողմէ ձեռ-
նարկուած է Մալիշէյի յառաջիկայ
1925 թուականին զինուորական տը-
րոց բաշխման գործողութեանց, և
կը պահանջուի ըստ առաջնոյն երեք
կամ երկու անձինք նշանակել բաշխ-
ման յանձնատնօրին անգամակցե-
լու համար, և դիտել տրուելով
որ Օսմ. Մահմանադրութեան վերա-
հաստատութեամբ քրիստոնեաներն
ալ զինուորադրութեան ենթարկը-
ւած են, հրահանգ կը խնդրուի այս
մասին:

Աղբ. Կեզր. վարչութեան
Քաղաք. Ժողովն արդէն խնդիրն
ուշադրութեան առած՝ յարաբերու-
թեան մէջ է այս մասին կայս. կառ-
ավարութեան հետ, հեռաւար-
րոտ որոշման Քաղաք. Ժողովոյ կը
հրաւիրենք, Գաւառ. Աղբ. վարչու-
թիւններն, որպէսզի հաճին սպասել
որոշ հրահանգներու և ո՛ր է գոր-
ծողութիւն չ'կատարել մինչև այն
առնել, և եթէ նոր հետապնդում մը
տեսնէք ուղղակի հեռագրել Օսմ. Ե-
րեսի. Ժողովոյ Վսեմ. Նախագահին
թե՛ պատրաստ ըլլալով զինուորա-
դրութեան, զինուորական տուրք չէք
կարող վճարել, և այդ դիմումը
հաղորդել նաև աղբ. Պատրիարքա-
րանի (*):

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պօլտոյ
ՄԱՏԹԵՈՍ ԱՐԲԵՊՈՍԿՈՍ

(*) Ծ. Խ. - Մեր Ամենապատիւ
Պատրիարքը ձգալիս ժամանակ և միտ-
քերը մուտքեցնող չըջարեական մը
հրատարակութեան տալու նեղու-
թիւնը կրած է:

Ամենապատիւ Պատրիարքը՝ փո-
խանակ ուղղակի զինուորադրութիւնը
ընդունուած ըլլալը յայտարարելու,
կը թելադրէ Գաւառ. Աղբ. վար-
չութիւններուն թե՛ «Եթէ ՀԵՏԱՊՆ-
ԴՈՒՄ ՏԵՍՆԷՔ, ՈՒՂԱԿԻ ՀԵՌԱ-
ԳՐԵՅԷՔ ՕՍՄ. ԲԱՐԱՎՄԷՆԹԻ ՆԱԽԱ-
ԳԱՀ ԲԻՉԱ ՊԷՅԻՆ ԹԷ՛ ՊԱՏՐԱՍՏ ԷՔ
ՉԻՆՈՒՈՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԻՆՈՒՈՐԱ-
ԿԱՆ ՏՈՒՐԲ ԶԷՔ ԿԱՐՈՂ ՎՃԱՐԵԼ» և

ՆԱԽԱԳԻԾ ԿԱՆՈՆԻ
 ԵՐՈՒՍԱԳԼԵՍԻ Ս. ՅԱԿՈՎԼՐԵԱՆՅ ՎԱՆՈՒՅ
 ՄԻԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՏԻՆ

Հիմնական Սկզբունք

(Շար. նախորդ թիւէն)

6. Նոր ընտրութիւնը անդամաց ընտրելի լինելու պայմաններն են .
 Ա. 21 տարին լրացուցած լինելը .
 Բ. Միջնակարգ կրթութիւն ըստացած լինելը .

Գ. Թէ՛ կրթութիւնը ստացած, շրջանաւարտ եղած կրթական հիմնարկութիւններէն, և թէ՛ սպրած վարժերու Ազգ. Կառու. վարչութիւններէ անբաժիր կեանքի վկայութիւն ունենալ .

Դ. Անպայման անշահախնդրութիւն և հրաժարում ընդդէմ իր ձապարկութիւններէ .

7. Ստացաւ մեծնոց կամ հրաժարուող անդամաց փոխարէն ընդունուելիք անդամաց համար ծրագր. յօդուածին պայմանները պահելով հանդերձ՝ պարտաւորել պետի լինի նախ Միաբանութեան կարծիքը աւանելու .

8. Ըստ 7րդ յօդուածի, նոր անդամաց ընտրութեան համար նախապատուութիւն պետի արտի բարձրագոյն կրթութիւն ստացած վկայեալ անձնաւորութիւններուն .

9. Միաբանութեան վարչապետ, աւագ սարկաւազ, աւագ դպրոցների 2րդ յօդուածին մէջ նշանակեալ թիւերը փոփոխութեան կարելի է են. թարկել, եթէ կրօնական պաշտամանց և կրթական աշխատութեանց պայմանները պահանջին : Այդ պարագային Միաբանութեան Ընդհ.

այդ գիմուքը հաղորդել նաև Սղդ. Պատրիարքարանի :

2րդ օրէնքին է այս ընթացքը. եթէ Պատրիարք և Ազգ. Երեսփոխորդ յարմար կը տեսնեն զինուորագրութիւնը, թող ուղղակի ծանուցանեն ազգին զանազան հասուածներուն թէ՛ իրենք յարմար տեսած և ընդունած են : Եթէ այդ չափ մը պատասխանատուութիւնը չ'պետի կրնան ստանձնել, ալ ինչո՞ւ ժողովուրդը պետի խնայելիք զերենք իբրև ՊԱՇՏՈՆԱՍԱՐ և ԳԻՏԱԿԻՅ : Իսկ եթէ գիտակցութիւն չ'ունին, և նասրէտաբն հոգան իշուն պատմութիւնը պետի յիշեցնեն մեզի, « դուն հոտացիր՝ մենք տուրակդ գրինք » ըսելով, թող զոնն յայտարարեն թէ՛ մենք անկարող ենք և ամբողջը թողանք... Ինչո՞ւ հայ ժողովուրդը ծուղակը ձգել կուզեն ստիպելով զայն որ « Մէջլէրէթ » ի Խմբադիր ԱՏՄէտ Բըզա Պէյնի դիմեն, որ Օսմ. Խորհրդաշանի նախադասն է հիմայ, և այդպիսի գիմուքի մը գրաւոր պատճէնն ալ Պատրիարքարան հաղորդեն . . .

Ասկէ զատ այսպիսի խիստ կարևոր որոշում մը Ազգ. Կեդր. Քաղաք. Ժողովին ձեռնհասութենէն բացարձակապէս վեր է ածեն որէնքով . Հայ Ժողովուրդին բուն ներկայացուցիչները Երեսփոխաններն են, և ո՛չ թէ՛ Քաղաք. Ժողովը, որ Երեսփ. Ժողովին կրնորուի վարչային նուազ կարևոր ընթացիկ գործոց զիւրութիւն մը ընծայելու համար :

Ժողովը որչեւոր, փոփոխութեան անհրաժեշտութիւնը ցոյց տուող փաստերով պատճառաբանեալ տեղեկացրով կ'առաջարկէ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովին, որ վանորէնց, Աւսումնական և Տնտեսական Խորհուրդներու կարծեաց ու գիտողութեանց հետ Կեդր. վարչութեան կարծիքը լսելէ յետոյ կ'ընդունի կամ կը ձեռնէ :

Յաւելուած Յօդ. .

Ա. Միաբանութեան ոչ մի անգամ, ինչպէս և Պատրիարքը չեն կարող անձնական ու է սեփականութիւն ունենալ .

Բ. Միաբանութեան մէջ մի անգամ կ'ստանայ և կը վայելէ վանքի ընդհ. մատակարարութենէ մարտը ընկարան, կահ կարասիք, սնունդ, հագուստ, լուսավարութիւն, շերմոց, սպիտակեղէն և այն ամէնը ինչ որ անհրաժեշտ են առողջ, հոգեւոր, մարդավայել սպրուտի, կենցաղավարութեան համար :

Գ. Ոչ մի միաբան, ինչպէս և Պատրիարքը իրաւունք չունին ու է նուէր, աջհամարք, վարձատրութիւն, ուճիկ, կտակ անձնական հաշուի ստանալ կամ ընդունիլ .

Դ. Իւր սեփական անուան և միւլը տե է կալուած, ու է գրքաւորութիւն ունեցող միաբան այն կանոնագրութեան դործադրութիւնը Ազգ. Ժողովէն որոշուած թուականէն մինչև երեք ամիս պարտաւոր է յանձնել վանքին սնտուկին և փոխանցել ու հաստատել ըստ տիրող պետական օրինաց Ս. Երեսփոխորդի Աթոռին .

Ե. Սոյն պայմանաւոր լրանալուց յետոյ՝ ու է կալուած, դրամագրութիւն, սեփականութիւն ունենալը, պահելը հաստատուած միաբանը կը համարուի իբր խարդախ, որուն սեփականութիւնը գրաւելով հանդերձ՝ կ'արտաքսուի միաբանութենէն .

2. Ժառանգութեամբ ստացուածները ևս պարտաւոր են փոխանցել և յանձնել վանքին .

Ընդհանուր Ժողով

10. Միաբանութեան անդամաց ամբողջութիւնը կը կազմէ Միաբանական Ընդհ. Ժողովը .

11. Միաբանական Ընդհ. Ժողովին նախագահն է Պատրիարքը կամ անոր ներկայացուցիչը և կամ Տնչապետը .

12 Միաբանական Ընդհ. Ժողովի պարտականութիւնն է աշխատութեանց բաժանումը կատարելով, վանոց և ուխտատեղեաց մէջ կրօնական պարտականութեանց բաժանը, այսինքն անդամաց ամէն մէկի պաշտօնը սահմանել .

13. Միաբանական Ընդհ. Ժողովի պարտականութիւնն է Ս. Յակոբայ վանոց և ուխտատեղեաց մատակարարութեանց յատուկ 12 հոգիէ բաղկացեալ ընտրելի մարմնի համար եռագոյնութիւն գտնի պարտատեղ և ներկայացնել վանորէնց Խորհրդին .

14 Միաբանութեան Ընդհ. Ժողովը կը կազմէ նաև կրթական պաշտօնէութեան համար եռագոյնութիւն գտնի և կը ներկայացնէ Ազգ. Կեդր. վարչութեան Աւսումնական Խորհրդին .

(Շարուակելի)

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մանստարայէն Տիար Կեղամ Տէր Միքայէլեան երկու օրինակ « Տխուր Ժպետ » նուիրած է Արաբկերի Կեդր. Աւսումնարանի երկու յաջողակ աշակերտներու իբր մրցանակ տրուելու համար .

Գիրքերը զրկուեցան Արաբկերի Գեր. Առաջնորդ հօր հասցէին .

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱԳԼԵՍԻՆ

ՄԻԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Քանի մը տողալ ներքին կեանքէն. Փետր, 25 ին և 26 ին. յաջորդական երկու Միաբանական Ընդհ. Ժողովոյ նիստեր ունեցանք. Առաջին ժողովին մէջ 34 հրաւիրեալներու 32ի ներկայութեամբ, օրակարգով զբաղեցանք. և այն ժողովին մէջ միաձայն հաստատութեամբ և յստիկայս քուէով Գերայնործ Տ. Գեորգ Ս. Արքեպիսկոպոսը օգնական օրոշեցինք, ծիրանազարդ Ամեն. Յարութիւն Պատրիարքին, իր իսկ ուղեւորը և առաջարկութեամբը. սոյն օրոշումը անմիջապէս հաղորդուեցաւ թէ՛ տեղական Կառավարութեան, թէ՛ Կեդրոնին և թէ՛ Տեղական Կառավարչի ու Պատրիարքի կողմէ Արգարութեան նախարարին և այլոք .

Եւ երկրորդ՝ նկատելով թէ՛ անցեալ տարի Մանկունի Եպիսկ և Արիս Ֆէսճեան. Կեդրոնէն իբրև քննիչ զրկուած էին, որք ալ տեղի կրճուտեցին վանական խնդիրները, բացարձակ կերպով կուսակցութիւն մը զօրացուցին ի վրաս վանական և Ազգ. շահուց. յանիրաւի արարներու վտարումներ ըրին միաբանութեան արդար իրաւունքը ոտնակոխ ընելու համար, իրենց դձուճ շահուն համար Կեդրոնէն արուած հրահանգը չը գործադրեցին, վանքի այս նեղ պարագային հազար ոսկի վրաս մ'ալ պատճառեցին, և ասոնց նման տախալին սրիչ շատ մը նկատումներու համար Միաբ. Ընդհ. Ժողովը Մանկունի և Արիսի պարտատանց և դժգոհութեան քուէ տուաւ .

Երրորդ՝ դատարիք փախուտական և Յոպպէի վանքը որջացած աւագակախութեան. Մատթէոս Գայրը ճեան, մեծ աւագակապետ. նոյնպէս Սատրիս վրդ. Աճէմեան, գլխաւոր կուսակալը. Սերաբէ Վ. Սամուէլեան, ճիզվիթ հաւատարացը, Դաւ իթ Վ. Տէրտէրեան յանդուգն և առաջին խառնարար. ներք իսպառ վտարեց Միաբ. Ընդհ. Ժողովս, միաբանութեան անդամակցութեանէն .

Չորրորդ՝ միաբ. ներքին կանոնադիրը որ անցեալ տարուայ Մանկունի և Արիսի բաւապետութեամբ միաբանութեան վրայ բացարձակ ճնշում գործելով, Աւետիս սպասուորի և իր պաշտպանեալ Դաւ իթ անտրժան Վ. ի կամաց համեմատ յօդուածներ աւելցնելով և պոկեցնելով Կեդրոնին վաւերացման զբրկած էին, միաբանութիւնը նոյն կանոնադիրը չեղեալ նկատելով. նոր մասախումբ մը օրոշեց որ ժամանակի սղւռոյն և պահանջման համաձայն նոր

կանոնադրի մը յայտագիրը պատրաստեն և քիչ օրէն ներկայացնեն Միաբ. Ընդհ. Ժողովին ի քննութիւն .

Հինգերորդ՝ Միաբ. Ընդհ. Ժողովս Գեր Տ. Հմայեակ Եպիսկ. Գիւմրասեանի, Միքաէլ Եֆ. Մսերեանի, Վառձապուհ Եֆ. Մանուկեանի, Բ. Եֆ. Պաշտեմանի և այլ երեսփոխան անդամաց գօհունակութեան և շրնորհակալութեան քուէ տուաւ, որք որք ի բոլին կաշխատին Ազգ. Երեսփոխանական Ժողովին մէջ Ս. Աթոռոյս շահերը պաշտպանելու. և արտաքին ոտնձգութիւններէ Ս. Աթոռը փրկելու համար .

Յոպպէ որջացող աւագակախութեամբ լսելով իրենց մտաին եղած անօրինութիւնը, քննիչներու հետ ամենքն ալ Պօլիս կը փախչին, որով ալ աւելի խառնաչփոթութիւն առաջ պիտի բերեն Պօլսոյ մէջ, սակայն միաբանութիւնս շատ ուրախ է որ ազգը իր աչքովը պիտի տեսնէ թէ՛ արդի Վեհ. Կաթողիկոսը ինչ կարգի ստորին ու վարձոց մարդիկ կը պաշտպանէ ու սոկի սրեն !!! կը կոչէ եզեր զանոնք .

ՄԻՆԵՄԱԹՕՎՐԱՖ
ՎԵՆԻՒՍ

Տէր ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒՍԱԳԼԵՍԻ ԴԱՍՏԵԱՆ
 Պուրսդի կառնխասան դիւանց քրաւիչի
 գօին վրայ
 ՆՈՐ ԲՐՕԿՐԱՄ

ՁԵՅՈՒՆԻ ԲԱՒԵՍԻՐՅՈՒՆ
 Պաշտեմական Օյինպագոյրին

Վերոյիշեալ ընկերութեան նախագահը, որ անշուշտ Ետոյեան Տ. Աւետիս Քահանան ըլլալու է, Արշալոյս ի 531-59րդ թուով « Ձէյթլի » թարեւրացին նկատմամբ արանակացած դանձապետներու գրպանը մտցուած 90 և 100 ոսկիներու համար՝ առանց զեղջի (escompte) աւերոյրով ին ստացուելով Ձէյթլի նի սովեալներուն զրկուելու համար եղած առաջարկին պատասխանելով, և Լուսաբեր ի վեջնիթեր թուոյն մէջ « պատ ի պատ » և անորոշ պատասխաններով միաւիճակեալ . . . (իրենց գործածած բաւն է) միտքը շիւթեցնել և սրիչ տեղեր փոխադրել կուզէ, որուն մենք « պաշտօնական օյինպագոյրին » անուրը տուած ենք ու կուտանք, շատ մը այդ կարգի տխրահոգակ պաշտօնական հերքումներու զիտաւորութիւնը, պատճառները և արդիւնքը հազարաւոր փաստերով մօտէն ծանօթ և հաստատած ըլլալուս համար . Աւ քէյ մը զարմանալի համարուելու արժանի բան մ'ալ եթէ կայ, Լուսաբերի վարչութեան բանած կեղծ ու պատիւ ընթացին է, որ ճիւղումացիս յայտուի անորոշ և տարտամ բաւերով աւելի շիթեղ կը ջանայ իրմէ միւսանիս յորըրջուած ընթերցողներու մտքերը, որոնք սակայն միամիտ չեն և ո՛չ իսկ իրենց կարծածին չափ . « Վեյթլի » լսելու և բարետիրական ընկերութիւնը » կրտէ Լուսաբեր, պաշտօնապէս մեզ կը հաղորդէ և ըն ու այդ պաշտօնապէս ութիւնը ներ-

կայացնող անհատներուն ո՛ր է մէկուն անունը չ'տար, որպէսզի անոնց խեղճութիւնը անուղղամտութիւնը երեւան չ'ըլլէ, որովհետեւ իր պաշտպանել փորձած խնդրոյն ինչ աստիճան խախտո՞ւ հիմերու վրայ գտնուած ըլլալը լաւ գիտէ . . .

Միտին թէ ինք-Լուսաբեր- սա վրատահութիւնը ունի որ իր և հետեւաբար մե'ր ալ ընթերցողները գտնուողութենէ զուրկ միամիտներ են . . .

Նախագար, հարկ կ'ըլլայ այդ ընկերութեան վարչութեանը խնամակալ և քաջնախակալ կազմը ընթերցողներուն ներկայացնել, արդի Գանձապետին խոսութեանը հետ, որպէսզի մենք ալ տեսնենք թէ ո՞ր աստիճան միամիտ են ընթերցողները: Բայց այս քայլին սպասելէ առաջ կարծէ որ Տ. Նախագահին ընել փորձած համարատուութիւնը ուղղութիւնէն չ'փրկուցնենք:

Տ. Նախագարը - անշուշտ բուրդին միմանկը մնացած նախագահ - հրատարակութեան կուսայ Իզմիր- լեան Սրբազանի 18 Նոյեմբեր 1908 թուակիր մէկ նամակը, որով նորին Ս.Մ.Ա.Կ.Ա.Տ.Ո.Ւ.Փ. սակի զրկուած ըլլալը կը հաստատէ և (30) սակի ալ նախկին Պատրիարքի (Օրմանեան) զրկուած ըլլալը կը յիշեցնէ այդ առիթէն օգտուելով:

Մեր ցոյց տուած 90էն 100 սակուոյ դուժարը 1903-4-5-6-7 ին կը պատկանին. կը հատկանէ Տէր պապա՛. կամ Տէր Նախագահ՛, որոնք դանձապետին ցրպանը մոռցուելու զօրուոր ալ պատճառներ կային . . .

Կրնո՞ք բնել թէ՛ Տէր պապա՛. 1905 ին յաջողած էիք ստանալ վերջոյնը հարիւրերակ մը սակիները, որոնք գանձապետին քով էին, և սնանկացողներու սովորական պարտապահանջներուն ցուցակին մէջ փաստարան Տ. Սմբատ Փափազեանի միջոցաւ համաձայնութեան (concordat) գրուած էին:

Վաճառականական օրէնքները կը պահանջեն որ համաձայնութիւն առաջարկող կողմը իրեն ամբողջ հաշիւը պարտականող տետրը օրինաւոր պայմաններու մէջ ի հանդէս բերէ. որքան է Ձեյթունի Բարեփրացին և պահանջն այդ տետրերուն մէջ պարտի կողմը անցուած էր անխուսափելի. և որովհետեւ իւրեց առաջարկած համաձայնութեան պայմանները չ'կարենալով զործագրել՝ անանկացան, ուրեմն և Բարեփրացին և գրեմն ալ պարտի կողմը անխախտ և անփոփոխ մնաց իբրև պահանջելի. արդ ինչպէս կըրնայ ըլլալ ոչ Գանձապետը ընկալագրերու փոխան - որոնց գոյութիւնը բացարձակապէս կասկածելի է - յճարած կ'ըլլայ:

Եթէ կըցած է վճարել, որուն կը կրկնենք թէ՛ ընա՛ւ չենք կրնար հաւատալ և Ձեյթունի Բարեփրա-

ցին և վերապահո՞ն գործունէութիւնը ի նկատի ունենալով, ուրեմն concordat և արդի անանկութիւնն ալ կեղծ կրնան համարուիլ: Իսկ կեղծութիւնը շահագործող անհատներէ իբրբը պատուաւոր և վրատահելի անձ, խղճամիտ և գովելի պաշտօնավարութիւն և պատել, Տէր Նախագահ Չեղի և Չեղի պէս մտածողներուն կը մնայ . . .

Արդ հակառակ պաշտօնական այդ օջիկնպարտիւնները հրապարակ գրուելուն, մենք կը կրկնենք թէ՛ նախորդ Գանձապետին կամ շնորհաւոր քով մնացած գրամներն ըստույրուած չին. - ու մենք քաջ գիտենք թէ ինչ պատճառներով պէտք է զանոնք ամբողջովին ըստանալ, առանց սենտիգային համաձայնութեան մտածակցելու՝ և Ձեյթունի կարտեալներուն զրկել անկէ յետոյ է, որ մենք և կը տեսնուինք զիստ հաստատուելու համար թէ՛ «Արշալոյս» սիւսլ տեղեկութիւններ չ'հրատարակուի

Ն.Ս.Մ.Ա.Կ.Ա.Տ.Ո.Ւ.Փ.

Վերջինս կ'մը. Ն. Ս.Մ.Ա.Կ.Ա.Տ.Ո.Ւ.Փ. ուղղած 524 թիւը զրկուեցաւ զատ ծրարով: «Արշալոյս» ի հաւաքածոյ մը գրեւոր թիւն, սակայն «անթերի» չէ. մէկ երկու թիւ կը պակաս: Եթէ կը հաճիք, Չեղի նոր հրահանգը տուէք մեզի: Լուսան . . . - Չեղ պատասխանազիր ստացուած է: Չեղ տուած հասցեով նամակ ունիք: Պոլիսէն եթէ ո՛րէէ պատասխան ստացաք, հաճեցէք փութով համառօտութիւնը մեզի առաջ նախ քան այն տեղին Չեղ պատասխան ստանալը: Չեղ ընելիք քայլը օրինաւոր չէնք գտնել, բայց կատար ձեռն է: Պոլիս . . . - Չեղ ուղղակի գրեւոր համար բաւական զօրութեամբ ինչ պիտի կրենք:

Գանձիք Պ. Յովակիմ Բրուտեան թող հաճի անդամ մը «Արշալոյս» ի տըպարանը հանդիպել:

Ա.Ձ.Գ.Ա.Տ.Ի.Ն. Ե.Ո.Ր.Ր.Ր.

Մեր ազգայիններէն շատերուն յայտնած հետաքրքրութեան գոհացում տալու համար, պէտք եղած ջանքերը ընելով ձեռք անցուցած ենք Ազգ. քառուկրոյ խառն Գասարանաց կողմէ ազգային Առաջնորդարանի գաղտնի նկատմամբ տրուած, դատաւճռոյն հարապատ պատճենը, և թիչ ատենէն հրատարակութեան պիտի տանք մտնաւոր յաւելուածով մը:

Եզրիպտահայ պատմութեան մէջ ամենէն նշանաւոր տեղը պիտի գրուէ, կը կարծենք, այս վճարագրոյն բովանդակութիւնը, որ իրատ շահեկան է:

ԳԱՐՈՒՆ Գասարանի նախարարութեան կողմանէ Պատրիարքարան հասած պաշտօնագիր մը՝ կը գրէ ԳԱՐՈՒՆ իր ութերորդ թուոյն մէջ, կը հարգէ թէ՛ Նրուսաղէմի կառավարելը սա՛ իմաստով զեկրոյց մը հաղորդած է նոյն նախարարութեան. - Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն կը ծանուցուի մեզ թէ՛ մինչև որ Տէր Գէորգ Արքեպիսկոպոս Երէջեան այստեղ չի զրկուի, վանքը չ'պիտի կրնայ խաղաղի:

ՅՈՒՅԱՀԱՆԴՍՄԷՆ ՅԵՏՈՅ

Կիզիբէի Երկրագործական և ճարտարարուեստական ցուցահանդէսին նկատմամբ նախորդ թուով հրատարակութիւններ եղան արդէն: Ինչպէս այդ հրատարակութիւնէն և ուրիշներէ ալ կարելի է հաստատել, ցուցահանդէսին մէջ ամենէն կարեւոր և ընդարձակ տեղը կը գրուէր Սինկլըր և Ընկերութիւնը: Երկրագործական մասնաճիւղը, իր ցուցադրած հրաշալի կարի և այլն մեքենաներով և բազմաթիւ պաշտօնականերով, որոնց գոյուր կը գտնուէր Եզրիպտոսի Ընդհ. Ներկայացուցիչը Պ. Ապրավանէլ:

Ցուցադրուած մեքենաներուն յատկութեանց և տեսակներուն վերայ այս էջերու ներածին չափ ծանօթութիւններ տրուեցան նախորդոյ այս անգամ ալ Արշալոյսի ընթերցողները պէտք է ծանօթացնել Սինկլըր և Ընկերութիւնը աշխարհահռչակ գարձակ գործունէութեան օգտակարութեանց վրայ:

1850 ին կազմուած է Սինկլըր և Ընկերութիւն և այժմ տասը ընդարձակ գործարաններ ունի, որոնցմէ հինգը Ամերիկայի մէջ են, մէկը՝ Գանատաի և չորսն ալ Եւրոպայի մէջ. այս վերջիններուն մէջ ամենէն կարեւոր տեղը կը գրուէ Անգլիոյ Կլասթովի մօտերը Գիլպոլի մեծ գործարանը, ուր միայն 10,000 է աւելի գործաւորներ կաշխատին: Վերջապէս Սինկլըր և Ընկերութիւն իր բոլոր գործարաններուն մէջ 40,000 է աւելի աշխատուորներու գործ և հաց կուտայ: Բան մը որ Ընկերութեան ընծայած օգուտներուն ամենէն գլխաւորն է:

Աշխարհի չորս կողմերը Սինկլըր և Ընկերութեան բացած վաճառատեղերը 7000 է աւելի պատկառելի թիւ մը կը ներկայացնեն, որոնց մէջ պաշտօն և գործ ունեցողները եթէ հաշուի առնուի 80,000 գործաւորներու ահագին թիւը կուենանք ի ձեռին:

Միմիայն Եզրիպտոսի և Սուտանի մէջ Սինկլըր և Ընկերութիւն 42 մասնաճիւղեր և վաճառատեղիներ ունի, որոնցմէ 220 ընտանիք կ'ապրուին իրենց օրապահելը այդ միջոցով հայթայթելով:

Գիւրին է գուշակել թէ՛ եթէ Սինկլըր և Ընկերութիւն կատարելագործեալ մեքենաները գոյութիւն չունենային, ո՞ր աստիճան դժուարութեանց պիտի բաղիւէր մարդկութիւնը ձեռքի աշխատութեամբ լրացնելու համար իրեն գործերը, ահագին ժամանակ յատցնելով մանաւանդ: Այս տեսակէտէն առնելով Սինկլըր և Ընկերութեան օգտակար ծառայութիւնը մարդկութեան հանդէպ նշանակելի է:

Ահա թէ ինչո՞ւ համար Սինկլըր եւ Ընկերութիւնը մեր լուրի համարու՞մը և յարգանքը վայելելու իրաւունք ունի, և երբ մենք գիտեալ պէտք ունենանք Սինկլըրի վաճառատեղիները մեր գնումներուն համար, հարկ է ընկերութեան ընելիք շահը նկատելէ աւելի՝ մեր ըրած գնումներուն ընծայելիք օգուտները և մեր արտադրելիք գործերու անմոռելի մարդկութիւնը և մա-

Նաւանդ վաստկած կատի ունենանք:

Հո՛ս է որ կրնանք ճանչցուլ վերոյիշեալ մեծափառ ընկերութեան մարդկութեան յառաջդիմութեանը տրամադրած առաւելութիւնները:

Իսկ երբ աչքի առջև ունենանք Եզրիպտոսի ընդհանուր ներկայացուցչին Պ. Ապրավանէլի հմտութիւնը և մարդավարութիւնը հանդէպ իր պաշտօնականներուն ընդհանրապէս, և գործաւորներուն մասնաւորապէս, այն ատեն աւելի երախտագիտական զգացում մը կ'արթննայ մարդոց սրտին մէջ, զէպի այդ աշխարհածանօթ Ընկերութիւնը:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԵԼՈՅ

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Տասներորդ ցանկ' and 'Տ. Տ. Յ. Ա. Խուրտաճեան և Ընկ.' with various monetary values.

Գումար գրք. ողջ. 151900,75 Մարտ 17/1 1909 Հ. Բ. Ը. Միութեան կնիք

Ն.Ս.Մ.Ա.Կ. ՊԵՐՈՒԹԻՆ ՊԵՐՈՒԹԻ ՂԱՅ ԵՆԵՂԵՑԻՈՅ ՓԱԿՈՒՄԸ

(Շար. նախորդ թիւէն.) Հիմայ կը հարցուի Վարչութեան թէ (եթէ երբէք ազգին ընտրած լինէր) Ա. ինչո՞ւ համար առանց նիւթականը մտածելու կը վտարէ Նրուսաղէմայ ձրի վարդապետը, և 100 սակի աւելորդ ծախս մ'ալ կը բանայ ժողովուրդին առջև, Բ. Գանի որ ժողովուրդը պիտի վճարէ դրամը, ինչո՞ւ ժողովուրդին յոթաութեամբ չի գործուի, Գ. ինչո՞ւ չի մտածէր վարչութիւնը թէ Պէրութի Հայոց մեծ մասը զպրօցական ուսանողներ են Գաղղիական և Ամերիկեան դպրոցներուն մէջ, որոնք շրջանաւարտ ըլլալով պիտի մեկնին, մնացածներն ալ ապրանք ծախելու համար եկած հիւր են, որով Պէրութի մէջ կը մնայ 15 տուն իբր տեղացի, ասոնցմէ ալ գըրթիկէ 10 տան կը մնայ նիւթական

ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻՄԱԽՈՏԻ

ԾԻ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎՊԿԶ - ԷԼ - ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆՆՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐՔ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՆԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անձրցելի աման դնելով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները դանելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամապահառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ սոյցելել մեր վաճառատնին :

Պարսկական անենարնտիր թէ՛ մալէքի սոյլ և սոյլ տեսակները բայցի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս վատ է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու ամանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և սոյլ ամէն տեսակներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անձրցելի է, սրուն անխտակ ապացոյցներէն մին ալ զարդացած և երազայիններէ, որըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐՔ

քիչ չատ կ'ըրգար թիւն ունեցող, ուրնք պիտի դժկամակին տարիկան 20 ոսկի գումար մը վճարելու :

Զարմանալի է որ գործող մարմինը լսարանի մէջ ընդհանրութեան առջև կը խոստովանի թէ սխալ և միանգամայն խիզախ քայլ մը առած է ներկայ պարագաներուն տակ և սակայն ընդհանուր ժողով մը կազմելով ժողովուրդին յօժար կամքով պիտի ուղղեն տեղի տրուած սխալը, ասով թէ կը խոստովանին իրենց յանձնարը և միեւնոյն ասան կը խոստանան ուղղութիւն մը, մինչդեռ միւս կողմէն կըրտապէս ինչ Պէյրութ զրկուած Լազրիէի Տեսուչ Վահան վարդապետ Բէշիշեանին գալը իմանալով մի քանի պնակալէզ գործակատարներու մը շնորհիւ կը հազարգէն յիշեալին թէ եկած շոգեւնաւով պէտք է վերադառնալ, վասնզի իբր թէ ժողովուրդը չընդունիր զինքը քանզի Նրուսաղէմայ կարգադրութիւնը չը պիտի ճանչնայ . վարդապետը առանց վանք երթալու կը յանձնեն թիւն մը և առանց ժողովուրդին երեսը ցուցնելու ճամբայ կը դնեն . Փոխանակ ուղղութեան սխալ քայլի շարունակութիւնը և վարչութեան խոստանալանցութիւնը գիտազ ժողովուրդին գազախարը շոջափելով կը հասկնան թէ չը համապատասխաներ իրենց ձուռ ճրագրին, կազմուելիք Բնագ. Ժողովուրդը և յետո՛ւ տաճկեն, որպէս թէ ժողովուրդը ստիպեալ ըլլայ քահանան գալէն վերջը ընդունելու :

Ի մտայ ասու մնասիրուած է այս երիտասարդական ինքնակոչ վարչութեան նպատակը թէ, Պէյրութի մէջ գտնուած երուսաղէմապետական վանքին վայրը իրացնեն և դըրած գտնելով (եթէ յաջողին ...) կալուածներ շինեն և անոնց հասոյթովը կառավարեն զպրոցն ու եկեղեցին այն ասան իրենց ուղածին պէս գործեն առանց ս և է մարմնայ մը իրաւասութեանը տակ մտնելու :

Ամեն անհատ կ'երազէ և կ'երեւակայէ թէ Առանայի ճամբուն վրայ թուրքեր անկէ, այն թուրքերուն վրայ բազմակ զոյանայ որպէսզի անցած դարձած հակերէն հաւաքելով զայն՝ գերձանի գործարան մը բանայ, բայց և այդպէս կը խորուի, ինչպէս որ մենք տարբեր պարագաներու մէջ խորուեցանք ... երազ. երազ ...

Ժամանակն է մեր բոլոր աղ-

գայիններուն յիշեցնելու թէ՛ քանի որ մեր ազգային կացութիւնը նորը քաղաքականութեան մէջ սեղմուած է, քանի որ պէտք ունինք լուրջ կերպով գործելով կարգադրել մեր ներքին վիճակը, այլևս վերջ տալու ենք ազգութեան անուէր արատաւորոյ խնդր մը ազգական գործ երէւ Այսօր տահնանագրական եղանք և ասոր համար ալ դժճ ենք, բայց և այնպէս չ'եմ հասկնար թէ Սահմանադրութիւնն է որ կը թոյլատրէ ինքնուտիւր Վարչութեան կամայական գործողութեանց, որոնցմէ անհամաձայնութիւններ ծագելով պատճառ կըլան տեսակ տեսակ ներքին խռովութեանց . Միթէ Սահմանադրութիւնը կը պահանջէ որպէսզի մենք չը ճանչնանք Պատրիարքարաններու հեղինակութիւնները և անոնց իրաւունքը ստանալու ընելով մեզի չը պատկանած վայրերն ալ բռնաբարենք . Ահա Պէյրութի աղբիւն վիճակը ներկայացնող խնդիր մը որ բոլորովն անտեղի է, սրուն համար Պատրիարքարաններու ու շաղբուրութիւնը կը հրաւիրեն, և պէտք կը տեսնեմ անգամ մ'ալ կրկնելու ազգայիններուս թէ՛ այլևս պէտք է վերջ տալ նմանօրինակ անփորձութիւններու և ապրոցան մտածելով գործել :

1909 Փետր. 10/23
Պէյրութ
Ա.ՉԱՍԱԿԱՆ ՄԷ

ՄԱՍԻՆՈՅ ՏԱԿ

ՍՓԻՆՔՍ

ՅԻՍՈՒՆԻ ՉՅՓ ԼՈՒՍԱՏԻՊ ՊԱՏ. ԿԵՐԵՐՈՎ ԵՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾՍԵՑ ԹՈՒԹԻՆԵՐՈՎ

Վաճառման արդիւնքին մէկ կարևոր մասը պիտի յատկանայ բարեգործական հաստատութեան մը . Հաւանորէն Հ. Բ. Ը. Միութեան, որ Հայկական միակ վտասահի հաստատութիւնն էր :

Տպագրութիւնը պիտի աւարտի մէկ տարիէն .
Կը պատրաստէ Տ. Ե. Թորոսեան մէկ քանի ուրիշներու բարոյական օժանդակութեամբ :

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻՍԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պատարի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիմօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տր Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կտրի մեքենաները ՄԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչև ցարդ 17.000.000 ծախուած է :


400 և աւելի վիսյակն և և յետագայով վարձատրուած, երաշխաւորուած մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսահակախիւն մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Ե. ԽՅԻՂԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՄԻՆԿԷՐ յատկանշին



Չրի դասեր և նորոգութիւններ, ՄԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդատուններուն մէջ :

Վաճառանց դիւրութիւն
Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Այ հող մի՛ բնէք թէ ձեր կարի մեքենաները Եւրոպայի մը գլխուն վրայ գրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար :

Պ. Սարգիս Թաշեան իրեն դիմող շատ մը յաճախորդներին քաջաբերուած, ատենէ մը ի վեր իր պաշտօնը թողելով, յատուկ կտք պատրաստած է և իր շրջուն ու շարժական խանութը «Վարուն» ին (անոր պղտիկ ձիուն անունն է) բարձր ամէն ինչէ կանցնի ամէն օր և ամէն ժամ :

Ձինքը ճանչնալու դժուարութիւն չկայ : Պղտիկ ձիուն մը քաջած կտուքին վրայ երբ մեքենաներու գործիքներ տեսնէք, որուն շոր կողմը ամեն ինչով կրուած է, մանուանց Réparation des Machines, անմիջապէս կամ «Վարուն» ինչեցէք, և կամ քիչ մը անդին Սարգիս Թաշեանը անունի ուղեցէք, իր կապոյտ կտուքը քոտային մէջ, անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կրնի անման յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ :

Չ'մոռնանք նաև կազի վտարաններու և ֆոնօկրօֆոններու նորոգութիւնը և նորերու հայթայթումը :

Պ. Թաշեանն այս դիւրութիւնները բնածախով, իր նմաններուն ծառայած ըլլալու գոնուանութիւնը պիտի ունենայ, և քիչ մ'ալ գրամ շահի պիտի ուզէ : Իր պիտիակներուն գոտախարակութեանը յատկացնելու համար :

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Արշալոյս» ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի տպարանի գիւմաղ կը վաճառուին հետեւեալ պրոշիւրները :

- Ա. ՊԱՆԿԱՆ
- ԺՂՈՎՈՒՐԴԻՆ ՄՈՏԵՆՍԵՐԱՆԸ
- Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
- » 2 Հիւլէն 50 »
- Թիւ 3 պրոշիւրը թիւ հրատարակ մը բայց ինչ ինչ նկատուիներով զանց կընենք անունը իշխատակի կարծ ժամանակի մը համար . զինն է մէկ ֆրանք :
- Դիմել Արշալոյսի տպարանութիւնէն զատ Հեղինակին հասցէին օր է .
- Mr. A. Bakian
- Le Cairo

ՄԸՄՄԱՐ ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կը հայրաքաղաքը տնկեր, որանկան փոխաստորիներ, կստանալու անկեակներ, հայի, խանութի և կաշուածներու փոխանցման գործառնորթիւն :

Իր կեդրոնատեղին է Պաղար Մարտիի դրան քովի երկու սրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն մը կէս օրէն յետոյ :